

## ՑԻՍՈՒՆ ՏԱՐԻ ԸԹԱԶ

### ԱՄՍՈՐԵԱՅ ԼՈՒՐԵՐ

ՄԵԽԱՆԻՄ ԱՄԵՆ. Ս. ՊԱՏՐԻԱՐՔ ՀՕԲ

Յունիս 15ին Ամեն. Ս. Պատրիարք Հայրը (Ընտրեալ Պատրիարք Տ. Մեսրոպ Արքապս. — Մ. Խ.) Լիբանան մեկնեցաւ քանի մը շարթուան հանգիստի և օդափոխութեան համար: Սրբազան Պատրիարք Հայրը, Լուսահոգի Տ. Թորգոմ Պատրիարքի մահէն ասգին, գրեթէ կորուցացած էր իր հանգիստը: Կը տառապէր անքութենէ, Բժշկական յանձնաբարութեամբ և Միաբանութեան թախանձանքին տեղի տալով էր որ Սրբազանը յանձն առաջ կարճ ժամանակեայ օդափոխութիւնը: Սրբազան Հայրը իր օդափոխութեան ընթացքին պիտի մեայ Գիքֆայա, Անթիկասի կաթողիկոսարանի հովոցը: Արդէն իսկ վերադարձած պիտի ըլլայ յառաջիկայ Վարդավառի տօնին (Յուլիս 16) կատարելու համար քահանայական ձեռնադրութիւնը Ընծայաբանի այս տարուան Գ. գասարանի սարկաւագներուն թիւով ութ հոգի:

(«Սիոն», 1939, ԺԴ. Տարի, Յուլիս, (Թիւ 7, էջ 276):

Ա. ԵՐԱ. ԴԱՐՁ Ա. ՄԵՆ. Ս. ՊԱՏՐԻԱՐՔ ՀՕԲ

Յուլիս 17, Երկուշաբթի, Լիբանանի իր կարծատե օդափոխութենէն վերադարձաւ Ամեն. Ս. Պատրիարք Հայրը: Թէև կը սպասուէր իրեն աւելի կանուխ, կատարելու համար այս տարուան ձեռնադրութիւնները Վարդավառի տօնին, սակայն բժշկական յանձնաբարութեամբ անհրաժեշտ դատուած էր գէթ շաբաթ մը ևս երկարածել օդափոխութեան այս շրջանը: Վերադարձաւ Սրբազան Հայրը զգալուպէս կազդուրուած: Այս պարտասումները, որունց ենթարկուեցաւ իր կատարած ձեռնադրութիւններու և երկարածիգ պաշտամունքներու ընթացքին հաստատեցին թէ արդարե վերագալած էր իր ցանկալի առաջդրութիւնը:

(«Սիոն», 1939, ԺԴ. Տարի, Օգոստոս, թիւ 8, էջ 306):

### ՆՈՐ ԶԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

23 Յուլիս, կիրակի օր, Ընտրեալ Պատրիարք Ամեն. Տ. Մեսրոպ Արքապս. Նշանեան հանգիստը Ս. Պատարագ մասոյց Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ և կուսակրօն քահանայ ձեռնադրեց Ընծայաբանէն ընթացաւարտ Սարկաւագներէն վեցը: Անոնց կ'ընկերանար Բարգէն Սրկ. Գասարձեան, որ ատենէ մը ի վեր կ'ուսանէր մեր մօտ, ծառայելու համար Ֆրանսա իրբե ամուսնացեալ քահանայ:

Զեռնադրուողներն էին հետեւալները. Կարապետ Սրկ. Սիրունեան, ծնեալ Ատանա՝ 1917ին, որ եղաւ Տ. Կոմիտաս Արեղայ. Ժիրայր Սրկ. Ուկանեան, ծնեալ Աղեքսանդրիա՝ գարձեալ 1917ին, որ եղաւ Տ. Գրիգոր Արեղայ, Վարդգէս Սրկ. Տէրունեան, ծնեալ Խզմիր՝ նոյն տարին, որ եղաւ Տ. Զաւէն Արեղայ, Յովսէփ Սրկ. Ապատեան, ծնեալ Այնթապ՝ նոյն թուականին, որ եղաւ Տ. Բարգէն Արեղայ, Աւետում Սրկ. Վարդանեան, ծնեալ Եղեսիի՝ գարձեալ նոյն տարին, որ եղաւ Տ. Յակոբ Արդ. և Աւետիք Սրկ. Մանուկեան, ծնած 1919 ին՝ Պաղտատ, որ եղաւ Տ. Թորգոմ Արեղայ (նոր վախճանեալ Պատրիարքին անունով): Իսկ Բարգէն Սրկ. Վերակոչուեցաւ Տ. Պետրոս Քահանայ:

Առաջին երեքը կարգաթթող եղած են, չորսորդը անժամանակ մահացաւ Արժանթին, իսկ վերջին երկութը 1966էն ի վեր կը մնան նոյն վայրը, մին Եպո.՝ իրեւ Առաջն. Հար. Ֆրանսայի, իսկ միւսը՝ Արքապս.՝ Հիւս. Ամերիկայի Արեւելեան թեմին:

Լուսաբարապետառութեան բարձր պաշտօնին կոչուած Հոգ. Տ. Կիւրեղ Վրդ. Խորայէլեանի տեղ, Ա. Թարգմանչաց Վարժարանի Տեսուչ նշանակուեցաւ Ս. Ուխտիս երկարամարդ և զարգացած Միաբաններէն Տ. Ակրովիք Վրդ. Մանուկեանը:

### ԵՆՈՐՃԱԲԱԾԽԱՋԻԹԻՒՆ

Յուլիս 29, Երաթե երեկոյին ժամերգութենէն ետք, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը Վարդավագնեան Մայրագոյն իշխանութիւն տուաւ Ս. Աթոռոյո Լուսաբարապետ Հոգ. Տ. Կիւրեղ Վարդավագետի (Խորայէլեան, հետագային Պատրիարք):

(Նոյն, էջ 304 - 305):